



ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՒԼԷՃ

ԼՐԱՏՈՒ

ԻԲ. տարի

Թիւ 1

ԲԱՐԵՐԱՐ ՌԱՖՖԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ 250 ՄԻՒՆՆ Լ.Ո. ԿԸ ՆՈՒԻՐԵ ՀԱԳ-ԻՆ

Հայ Աւետարանական Գուլճի բարերար տիար Ռաֆֆի Մանուկեան, շարունակելով իր ազնիւ յանձնառութիւնը դպրոցին հանդէպ եւ հաւատալով անոր քրիստոնէական եւ ազգային առաքելութեան, յաւելեալ 250 միլիոն լիբ. ոսկիի նուիրատութեամբ կը հոգայ 100 աշակերտի կրթանպաստը 2020-2021 տարեշրջանին:

Շնորհակալութիւն կը յայտնենք մեծարգոյ բարերարին, որ միշտ կը շարունակէ մնալ ՀԱԳ-ի կողքին ստարտելով անոր 98-ամեայ երթին:

ԲԱՐԵՐԱՐ ԱՖԷԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ 30 ՀԱՉԱՐ ՏՈՒՄ ԿԸ ՆՈՒԻՐԵ ՀԱԳ-ԻՆ

Հայ Աւետարանական Գուլճի նախկին աշակերտներ Պետրոս, Լեւոն եւ Նուպար Աֆէեան բարերար եղբայրները 30,000 ամ. տոլարի նուիրատութիւն մը կատարած են Հայ Աւետարանական Գուլճին, յատկապէս ապահովելով ուսուցչաց յետնեալ հաշիւներու վճարումը:

Շնորհակալութիւն կը յայտնենք մեծարգոյ Աֆէեան եղբայրներուն, որ Լիբանանի այս տաճնապալի օրերուն անմիջապէս անսացին մեր կոչին եւ հաւատարմով ՀԱԳ-ի առաքելութեան՝ օժանդակութեան ձեռք մեկնեցին անոր:

ԲԱՐԵՐԱՐ ՀՐԱԶ ՍԻՍԵՌԵԱՆ 25 ՀԱՉԱՐ ՏՈՒՄ ԿԸ ՆՈՒԻՐԵ ՀԱԳ-ԻՆ

Փարիզաբնակ երկարամեայ նախկին աշակերտ դպրոցի բարերարներէն մեծարգոյ պրն. Հրաչ Սիսեռեան, իր ծնողաց՝ Գեղամ եւ Ալիս Սիսեռեաններու յիշատակին իր տարեկան յատկացումը 25,000 տոլար փոխանցեց դպրոց 2019-2020 տարեշրջանին համար:

Մեր յայտով շնորհակալութիւնները կը յայտնենք ազնիւ բարերարին իր մշտական հոգածութեան համար:

ԲԱՐԵՐԱՐ ԱԼՊԵՌ ՊԵՉՁԵԱՆ 15 ՀԱՉԱՐ ՏՈՒՄ ԿԸ ՆՈՒԻՐԵ ՀԱԳ-ԻՆ

Հայ Աւետարանական Գուլճի 1957-ի շրջանաւարտ, բարերար Ալպեռ Պեչճեան 15,000 ամ. տոլարի նուիրատութիւն մը կատարած է Հայ Աւետարանական Գուլճին, որպէսզի իր Մայր Կրթարանը կարենայ շարունակել իր 98-ամեայ առաքելութիւնը:

Շնորհակալութիւն կը յայտնենք մեծարգոյ պրն. Պեչճեանին, որ հաւատարմով ՀԱԳ-ի տեսիլքին կը շարունակէ նպաստել դպրոցի վերելքին:

ՀԱԳ-ի շատ սիրելի աշակերտներ, ծնողք, ուսուցիչներ, շրջանաւարտներ եւ բարեկամներ, Դժուար տարի մը իր աւարտին հասցուցիք: Իբրեւ մարդ արարած, հայ ազգի զաւակ եւ Լիբանանի քաղաքացի՝ դիմագրաւեցիք վախերու, յուսախաբուրութիւններու եւ դժուարութիւններու աննախընթաց շարան մը:

Տաճնապը դեռ կայ, ապագան մշուշոտ է, բայց բոլոր խնդիրներէն վեր կայ իրականութիւն մը, որ դեռ կանք, հո՛ս եւք: Իսկ գոյութիւն ունենալ ՀԱԳ-ի մէջ կը նշանակէ արժէք ներկայացնել, արժէք ստեղծել եւ արժէք գնահատել:

Քորոնան հարուածեց աշխարհը՝ պատճառելով անասելի կորուստներ: Գտանք միջոցը շարունակելու մեր դասաւանդութիւնները, որովհետեւ սերունդ կրթելը պարտականութիւն է, այլ՝ առաքելութիւն է, արժէք ստեղծել է, եւ ուսուցչակազմին, նաեւ ծնողաց ու աշակերտութեան նուիրումը այդ մէկը կը փաստէ:

Տնտեսական տագնապը, Օգոստոս 4-ի պայթումը, քաղաքական անկայունութիւնը սարսեցին լիբանանեան տնտեսութեան արդէն խախտու հիմքը: Սակայն ՀԱԳ սկսաւ իր 98-րդ տարին, շնորհիւ անհատ բարերարներու, Մերձ. Արեւելքի Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան, Հայ Աւետարանական Ընկերակցութեան օժանդակութեանց եւ Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ ու դպրոցի պատասխանատուներուն վճարակամութեան: Բարոյական եւ նիւթական աջակցութիւնը ապացոյց են որ կրթութիւնը կարելոր արժէք է:

Արցախեան գոյամարտին տխուր ելքը ցնցեց բոլորիս հոգիները: Սակայն հաւատալով որ հայրենիք եւ ազգ արժէքներ են, պիտի շարունակենք մեր հայապահպանման առաքելութիւնը զանոնք առաւել բարձր պահելու համար:

Արժէքներու արժէքը մեր Տիրոջ ողորմածութիւնը, սերը եւ հոգածութիւնն է: Ինք է գերագոյն արժէքը եւ բոլոր արժէքները արժեւորողը: Իր Որդւոյն՝ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի ծննդեան տօնին եւ Ամանորի առթիւ բոլորիդ կը մաղթենք, առողջ, խաղաղ եւ բարեբեր տարի մը:

«Արժանի ես Տէ՛ր, փառք ու պատիւ եւ զօրութիւն առնելու, վասնզի ամէն բան դուս ստեղծեցիր եւ քու կամքովդ եղան ու ստեղծուեցան» (Յայտ. 4:11):


ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՊԱՅԹՈՒՄ

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ



Օգոստոս 4-ի նաւահանգիստի պայթումէն լուրջ նիւթական վնասներ կրեց ՀԱԳ-ի դպրոցաշէնքը եւ առաջին եկեղեցին: Բարերախտաբար ՀԱԳ-ի մեծ ընտանիքին մարդկային վնասները սահմանափակուեցան մանր վիրաւորումներով եւ նիւթական վնասներով: Շնորհիւ բարերարներու եւ 1995-ի շրջանաւարտ ճարտարագէտ Եղիկ Թորոսեանի բժախնդիր եւ սիրայօժար աշխատանքին, մէկ ամսուան մէջ դպրոցին վնասները կարելի եղաւ վերանորոգել:



تتذكر وما تنعاد (ՅԻՇՈՒԻ՝ ՉԿՐԿՆՈՒԻ)

Արաբները վերոյիշեալ հետաքրքրական մադթանքը ունին անցեալի դժուար օրերու մասին. «Լրատու»-ի նախորդ (Յունիս 2020) թիւէն ցայսօր լիբանանեան եւ հայաստանեան ցաւագին պատահարները յիշելով տարին կը փակենք ոչ թէ հայերէն «ամէն տարի այս օրերուն» ասոյթով, այլ արաբերէն -تتذكر وما تنعاد-ով:

...

Ուսուցիչներս որքան ալ հասկացողութեամբ մօտենանք աշակերտներու կրկնուող սխալներուն եւ թերացումներուն, տեղ մը կու գայ, որ համբերութիւնը կը հատնի: Մեր լիբանանեան եւ ազգային կեանքին մէջ այլեւս համբերութեան տեղ մնաց...

Յիշենք, որպէսզի այլեւս սորվինք սխալներէն:

Յիշենք, որպէսզի վերջապէս նոյն սխալները չկրկնենք:

Յիշենք, որպէսզի աւերակներուն վրայ թագաւորելու փոխարէն, աւելի լաւ կեանք կերտենք:

Մենք յիշենք եւ սորվինք, որպէսզի մեր զաւակները մեր տհասութեան պատճառով նորէն չապրին մեր դառն փորձառութիւնները:

«Պատմութիւնը ինքզինք կը կրկնէ» կ'ըսենք: Կը մոռնանք, որ պատմութիւնը մենք կը գրենք, հետեւաբար անոր կրկնուիլ-չկրկնուիլն ալ... մեզմէ կախում ունի:

Շնորհաւոր Նոր տարի եւ օրհնաբեր Սուրբ ծնունդ:

Երթանք բարով, 2020:

تتذكر وما تنعاد

ԱՐՄԵՆ ԻՐԱՆԵՇԵԱՆ

ARARATBOX

Araratbox-ը հայաստանեան նախաձեռնութիւն մըն է, որուն գլխաւոր նպատակը հայրենի մանր արդիւնաբերութիւնը քաջալերելն է: Այդ ծիրէն ներս ՀԱԳ-ի մեծ ընտանիքի ջանքերով կարելի եղաւ պատրաստել աւելի քան 70 տուփ նուէր, որ Ամանորի նախօրեակին ղրկուեցաւ արցախցի եւ հայաստանցի մանուկներու:



Շնորհակալութիւն բոլոր սուկրատուներուն, որոնք ժպիտ եւ խիստ կրցան պարգեւել կարիքաւոր մանուկներու դէմքին:



ՊՍԱԿԱԾԵՒ ԺԱՀՐԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՎԱՀԱՆՆԵՐ



Հ Ա Գ - ի շրջանաւարտներէն մէկուն զաւակները՝ ՀԱԳ-ի աշակերտական գրասեղաններուն համար սուկրեցին 100 PET վահաններ, իբրեւ աշակերտներուն

յաւելեալ պաշտպանութիւն Պսակածեւ ժաիրի վարակումէն:

Մեծապէս շնորհակալ ենք իրենց հոգատարութեան եւ ազնիւ սուկրատութեան համար:

ՎԵՐԱՄՈՒՏ ԵՒ ՊԱՇՏԱՄՈՒԼՔ

Հակառակ բոլոր մարտահրաւերներուն եւ դպրոցի յաճախակի փակումներուն, երկրորդական բաժինի ամբողջական դպրոց ներկայութեան օրը՝ 12 Հոկտեմբերին կրցանք ունենալ խմբային պաշտամունք մը, որպէսզի մեր տարին սկսիք փառաբանելով զԱստուած եւ շնորհակալ ըլլալու Անոր օրհնութիւնները առատօրէն վայելած ըլլալուս համար:



➤ Վերջին ամիսներուն համաշխարհային եւ հայկական մամուլը, լատենտղական եւ ընկ. հաղորդակցութեան միջոցները ողողուած են ՀԱԳ-ի նախկին երկարամեայ աշակերտ, Մօտեռնա ընկերութեան հիմնադիր Ինա Պապիանի հոգով: Նույնպէս ԱՖէեանի հետ հարցազրոյցներով Covid-19-ի դէմ պատուաստի պատրաստութեան մէջ անոր ղեկավարած ընկերութեան արձանագրած բացառիկ յաջողութիւններուն մասին: Ի շարք այլոց դուրս. ԱՖէեան ելոյթ ունեցաւ CNN, PBS, CBC, Al Arabiya, France 24, Bloomberg, CNBC հեռատեսիլային կայաններէն:



➤ ՀԱԳ-ի բարերարներէն երկարամեայ աշակերտ Ռաֆֆի Մանուկեան 165 միլիոն լ.ն. նուիրեց Մետրոպէան Արուեստից վարժարանին, հոգալով 161 աշակերտի տարեկան կրթաթոշակին մէկ երրորդը:

➤ 23 Հոկտեմբեր 2020-ին Լուս Անճելոսի Թէքէեան Մշակութային Միութեան կազմակերպած Արցախի զօրակցութեան հաւաքին բացման խօսքը կատարած է Միութեան արեւմտեան ափի վարիչ-քարտուղարուհի, 1978-ի շրջանաւարտուհի Մայտա Քիւրէճեան: Հեռակայ կարգով ելոյթ ունեցողներուն մէջ եղած է 1971-ի շրջանաւարտ, «Մասիս» շաբաթաթերթի խմբագիր Յարութ Տէր Դաւիթեան:

➤ 4 Հոկտեմբեր 2020-ին Լիբանանի Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը Նոր Հաճնոյ Ս. Գէորգ եկեղեցոյ շրջափակին մէջ մատաղօրհնէք եւ հոգեհանգստեան պաշտօն կատարել տուաւ: Այս տեղի ունեցաւ Հաճնոյ հերոսամարտի նուիրուած յուշակոթողի բացումը: Խօսք առնողներուն մէջ էին Միութեան ատենադպրուհի՝ ՀԱԳ-ի մնայուն ուսուցչուհի Տիկ. Զարմինէ Ասմինեան եւ ատենապետ՝ ՀԱԳ-ի երկարամեայ նախկին աշակերտ Փոլ Եագուպեան:

➤ «Նուվէլ տ'Արմենի» ամսաթերթի Սեպտեմբեր 2020-ի թիւն կ'իմանանք, որ ազգային բարերարներ տէր եւ տիկ. Վաչէ եւ Թամար (1978-ի շրջանաւարտուհի) Մանուկեան, ՀԲԸՄ-ի միջոցով լիբանանահայոց օգնութեան համար նուիրած են մէկ միլիոն տոլար:

➤ Օգոստոս 4-ի Պէյրութի պայթումի Լիբանանի թէքէեանապատկան կառոյցներու վերաշինութեան յանձնախումբի անդամ նշանակուած է երկարամեայ նախկին աշակերտ Միքայէլ Վալէճեան:

➤ Լիբանանի թեմի Ազգ. Առաջնորդարանի 18 Օգոստոս 2020-ի հաղորդագրութենէն կը տեղեկանանք, որ տէր եւ տիկ. Յարութիւն եւ Սիլվիա (1971-ի շրջանաւարտուհի) Մթամպուլի երկրորդ 100 միլիոն լ.ն. նուիրատութեամբ կը զօրակցին լիբանանահայութեան (Առաջնորդարան, ՀԲԸՄ, ԼՕԽ եւ Քորոնայի Ճգնաժամային Շտաբ):

➤ Պէյրութի աղէտէն անմիջապէս ետք լիբանանահայ թեմի առաջնորդ Շահէ արք. Փանոսեանի գլխավորութեամբ կազմուած Լիբանանահայութեան Վերականգնումի Մարմինին մէջ հայ աւետարանական համայնքը կը ներկայացնէ դպրոցի հոգաբարձութեան ատենապետ, 1979-ի շրջանաւարտ Ներսէս Պաղտոյեան:

➤ 24 Յուլիս 2020-ին Լիբանանի Հայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական Ժողովին կողմէ նախկին երկարամեայ աշակերտ Մարգիս Սիմիթեան նշանակուած է հաշուեքննիչ յանձնախումբի անդամ:

➤ Ֆրանսաբնակ անուանի մեներգիչ, ՀԱԳ-ի երկարամեայ նախկին աշակերտ Վիգէն Դարբինեան մասնակցեցաւ Լիբանանեան հեռատեսիլի LBCI կայանի «Seniors» երաժշտական յայտագրին:

➤ 1987-ի շրջանաւարտ, հեռատեւսիլային յայտագիրներու հանրածանօթ վարիչ Զաւէն Գոյումճեան Յուլիս 2020-էն ի վեր «Մաութ Լուպնէն ալ-Քըլ» ճայնասփիտի կայանէն առաւօտեան փոխադարձ զրոյցի երաժշտախառն «Պոնժուրեյն» յայտագիրը կը վարէ:



ԱՊԱՔԻՆՈՒՄ

• 4 Օգոստոս 2020-ի Պէյրութի նաւահանգիստի մեծ պայթումին հետեւանքով Ազարիէի իր գրասենեակին մէջ վիրատուուած է 2005-ի շրջանաւարտուհի Ալին Քէշիշեան, որ անհրաժեշտ վիրաբուժութենէ ետք ապաքինած է իր վերքերէն:




† 1952-ի շրջանաւարտ նախապէս Պէյրութի եւ ապա Ժալէլ-Տիպի մէջ վաճառատան տէր եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդր. Վարչութեան երկարամեայ անդամ, **ՊԱՏՐԻԿ ԿՌԸՊԵՆԿԵԱՆ** (1932-2020) մահացաւ Պէյրութի մէջ 11 Դեկտեմբեր 2020-ին:

† 1945-ի շրջանաւարտ, մշակուած թատերական եւ հանրային գործիչ **ՍԱՄՈՒԷԼ Ի. ԼԱՆՃԵԱՆ** (1927-2020) մահացաւ Լոս Անճելոսի մէջ 29 Հոկտեմբեր 2020-ին՝ յառաջացեալ տարիքին: Հանգուցեալը ՀԱԳ-ի Պէյրութի Շրջանաւարտից միութեան նախկին վարչութիւններու եւ թատերախումբի սիւներէն եղած է: Ան ՀԵԸ-ի Պէյրութի «Վահրամ Փափագեան» եւ ՀԲԸՄ-ի Լոս Անճելոսի «Արտաւազդ»



թատերախումբերու հիմնադիրներէն եւ ատենապետ եղած է:



† 1969-ի շրջանաւարտուի, հանրային գործիչ եւ ԱՄՆ-ի ՀԱԳ Ուսանողաց միութեան հիմնադիրներէն եւ առաջին ատենադպիր **ՍՈՆԱ ՀՍՄԱԵԱՆ** (1951-2020) մահացաւ Երեւանի մէջ Covid-19-ի հետեւանքներէն: Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ 17 Հոկտեմբեր 2020-ին:

† 1965-ի շրջանաւարտ, երկրաչափ եւ համալսարանական դասախօս **ՎԱՀԷ ԳԼՃԵԱՆ** (1947-2020) 17 Հոկտեմբեր 2020-ի կէսերուն յանկարծամահ եղաւ համալսարանի իր պաշտօնատեղիին մէջ, Լոս Անճելոս:



† ՀԱԳ-ի 1958-ի շրջանաւարտ **ՊԵՏՐՈՍ ԲԷՔԼԻԿԵԱՆ** (1938-2020) մահացաւ Լոս Անճելոսի մէջ 13 Օգոստոս 2020-ին, յետ անողորմ հիւանդութեան:

† ՀԱԳ-ի 1951-ի շրջանաւարտ, AUB-ի նախկին դասախօս, դեղագործ **ՓՐՈՑ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱԼՃԵԱՆ** (1933-2020) մահացաւ ԱՄՆ-ի մէջ 11 Ապրիլ 2020-ին:



† AUB-ի “Main Gate” պարբերականէն տեղեկացանք մահը 1944-ի շրջանաւարտ **ՄՈՎՍԷՍ ԳԱԼՃԵԱՆԻ** (ԱՄՆ): Ան կրթական մշակ էր, երկար տարիներ աշխատած է Հնդկաստան, տարի մըն ալ (1948-49) դասաւանդած է ՀԱԳ-ի մէջ: Հետագային դասախօս եղած է ԱՄՆ-ի Էն Արայրի համալսարանին մէջ:

ՊՍԱԿ

- Նախկին աշակերտուի Արազ Պեյրոնու պսակուեցաւ Կարօ Զաւուշեանի հետ, Պէյրութի մէջ, 2 Օգոստոս 2020-ին:

ԲԱՆՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ

- 2006-ի շրջանաւարտ Ռաֆֆի Իգնատիսեան եւ տիկինը 22 Յունիս 2020-ին Պէյրութի մէջ բախարաւորուեցան երկրորդ զուակով մը՝ Մայքըլ:

† ՀԱԳ-ի երկարամեայ բազմավաստակ ուսուցիչ եւ արաբերէնի բաժանմունքի (1960-1976 եւ 1995-2008) նախկին ատենապետ **ՆԱ՛ԱՄԵՆ ՆԱ՛ԱՄԵ** (1938-2020) Պէյրութի մէջ մահացաւ 10 Հոկտեմբեր 2020-ին, ուղեղային կաթումբի հետեւանքով:



1964-Ի ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ – ԱՄՎԵՐՔԻ ՀԵՆՐԷՍ
 Զախէն աջ՝ Քերովրէ Զոպանեան, Պարոյր Աղպաշեան, Արրահամ Սաղորճեան, արաբերէնի վաստակաւոր ուսուցիչ Նա՛աման Նա՛ամէ (*), Արմէն Կէօնճեան, Արա Զալեան:

ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԼՐԱՏՈՒ»-ի նախորդ թիվն է վեր շնորհակալությամբ ստացանք հետևյալ նուիրապուրությունները:

Հայաստան Համահայկական Հիմնադրամ (2 առիթներով)	10,223 տոլար
Heart of Lebanon	4,000 տոլար
Արցախի Հանրապետություն	1,472 տոլար
Տիար Սարգիս Սիմիթեան 2019-2020-ի իր փարեկան յարկացումը	1,000 տոլար
Շրջանաւարտ մը	2,400 տոլար
Շրջանաւարտ Կարպիս Թերզեան (Յունաստան)	200 տոլար
Մի ոմն	100 տոլար
Հասըրճեան Ընտանիք (Լիբանան)	1,500 տոլար
Տիկ. Լենա Գարակէօզեան-Իրնէշլեան	500,000 Լ.Ո.
Շրջանաւարտ Արման Խտրլարեան	700,000 Լ.Ո.

4 Օգոստոսի ԱՂԵՏԷԷ ԵՏՔ՝
ԸՆԴՈՍԱԶԵԼՈՎ ՊԱՏՈՒԱԿԱԼ ՏՆՕՐԵՆԻ ԿՈՉԻՆ,
ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐ ԵՒ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Տիկ. Շողակ Յովհաննէսեան (ԱՄՆ)	1,000 տոլար
Տիար Շահէ Մոմճեան (ԱՄՆ)	1,000 տոլար
Տիար Փոլ Քարլոզեան (ԱՄՆ) Օգոստոս 4-ի աղէտի զոհ իր զարմիկին՝ Ողբ. ճեսիքա Պէզճեանի յիշատակին	1,000 տոլար
Տէր և տիկ. Սեդո եւ Սիլվա Էօրտէքեան (ԱՄՆ)	950 տոլար
Տիար Ներսէս Տերմենճեան (ԱՄՆ)	500 տոլար
Տէր և տիկ. Մորիս և Պերճուհի Կիլեսերեան (ԱՄՆ)	200 տոլար
Տիար Կարօ Գասարճեան (ԱՄՆ)	100 տոլար
Տէր և տիկ. Յոսէփ Դովմաճեան (ԱՄՆ)	100 տոլար
Տիար Հայկ Մսրրլեան՝ ի յիշատակ հորաքրոջ՝ Արթուրի Մսրրլեանի	50 տոլար

ՀԱԳ-Ի ՎԱՍՏԱԿԱՌՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ՄԱՐԶԻՉ՝ ՈՂԲ. ԿԱՐՕ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՓՈՒԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ AMAA-Ի ՄԻՋՈՑՈՎ ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԱԾ ԵՆ

Տիկ. Մարի Կ. Գազանճեան
 Տիկ. Արաքսի Գազանճեան
 Տիկ. Մարի Գազանճեան
 Տէր եւ տիկ. Ճորճ Աբոշեան
 Տէր եւ տիկ. Ռաֆֆի Աբոշեան
 Տոքթ. եւ տիկ. Արմէն Կէօճեան
 Տէր եւ տիկ. Կի Պազարեան-Կրին Անի Պերթիզլեան
 Շելպի եւ Նենսի Պլեքըր
 Տէր եւ տիկ. Վարդգէս Պոյաճեան Սիրուն Տարաքճեան
 Տոքթ. եւ տիկ. Ուալիտ Ղուրապի
 Տէր եւ տիկ. Կերի Հինտոյեան
 Տէր եւ տիկ. Զաւէն Գալուստեան Լիլիթ Գազիխանեան
 Տէր եւ տիկ. Ճորճ Մանտոսեան
 Տէր եւ տիկ. Մարք Միքայէլեան Տոքթ. Սարգիս Արեւեան
 Սարգիս Եագուպեան ԸՆԴՈՍԵՆ 3475 ՏՈԼԱՐ

ՀԲԸՄ-Ի ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵՆԷՆ «ԶԱՒԵՆ ՄՍԵՐԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿ» ԳՈՒՄԱՐԸ

2486 ՏՈԼԱՐ
պապուակալ փնտրէնին փափաքով փոխան-
ցուեցաւ դպրոցի կրթանպաստի ֆոնդին:

ՀԱԳ-Ի ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒՍՈՒՑԱԿԱԶՄԸ ԵՒ ՊԱՇՏՕՆԵՐՈՒԹՅՈՒՆ

100,000 Լ.Ո.

Տիկ. Յասմիկ Տեմիրճեանի մօր՝ ողբ. Հնազանդ Հալաճեանի
 եւ 100,000 Լ.Ո.
 Տիկ. Նուարդ Ղորղորեանի մօր՝ ողբ. Արփինէ Քիրէճեանի յիշատակներուն:

Խմբագիր՝ ՏՆՕՐԵՆ ԴՈԿՏ. ԱՐՄԵՆ ԻՐԱԵՇԼԵԱՆ
 Խորհրդատուներ՝ Տիար ՆԵՐՍԵՍ ՊԱՌՏՈՅԵԱՆ
 Տիար ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՃԵԱՆ
 Էջադրում՝ Ասի ԲԵՍԵՆԵԱՆ-ՊԱՍԵԹ
 Մ.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE
 P.O. Box 3672-Beirut
 Tel: 01 349 816 Fax: 01 751 469
 E-mail: A_E_C@cyberia.net.lb
 Website: aecbeirut.edu.lb
 Facebook: Armenian Evangelical College